



Ուինձըրի «Ռուպինա» մասնաճիւղի ՀՕՄ-ի Օրը տեղի ունեցաւ Կիրակի 26 Մարտ 2011, յետմիջօրէին ժամը 1:30-ին հայ կեդրոնէն ներս: Ներկայ էին Հայր Մեդրիկ Ծ. վրդ. Բարիքեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետուհի ընկհ. Աննա Պուլկարեան եւ վարչական անդամներ, խումբ մը ուխտեալներ, որոնք մասնակցած էին Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ կազմակերպած ուխտագնացութեան դէպի Ուինձըրի Ս. Աստուածամօր եւ Ս. Շարպէլի նուիրուած եկեղեցիները, ինչպէս նաեւ ՀՕՄուհիներ եւ համակիրներ:

Հայր Մեդրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի սեղանի օրհնութենէ ետք խօսք առաւ մասնաճիւղի ատենապետուհի ընկհ. Անի Նարգլարեանը, ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք Թորոնթոյէն եկած էին մասնակից դառնալու ՀՕՄ-ի օրուան տօնակատարութեան:

Օրուան հանդիսավար՝ Կարօ սարկաւազ Սարգիսեան բեմ հրաւիրեց Թորոնթոյի «Զարեհ Ազնաւորեան» կրտսեր դասի պարմանուհի՝ Դալար Ներսէսեանը, որ նուազեց Գանատայի, Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայլերգները, ապա երգեց «Ղարաբաղ» եւ «Երեւան» երգերը: Կարօ սարկաւազ Սարգիսեան արտասանեց իր բանաստեղծութիւններէն մին եւ բեմ հրաւիրեց օրուան բանախօս՝ ընկհ. Արմիկ Սաֆարեանը փոխանցելու օրուան խորհուրդը: «Այս առիթով ինձի վիճակուեցաւ յարգանքի տուրքս տալ բոլոր հայ մայրերուն եւ քոյրերուն, որոնք անհուն զոհողութեամբ խնամեցին եւ դաստիարակեցին հայ սերունդները դարերու ընթացքին» ըսաւ ընկհ. Սաֆարեան ապա անդրադարձաւ հայ կնոջ ցուցաբերած յառաջդիմութեան դարերու ընթացքին բացատրեց թէ «խաւարակուռ շրջաններուն կինը ոչ մէկ հասարակական ուժ կը ներկայացնէր, սակայն Վարդանանց պատերազմի շրջանին ունեցած ենք լուսամիտ կիներ, որոնք դաստիարակած են հայրենասէր հայեր»: Բանախօսը շարունակեց ըսելով թէ «Ը. Դարուն կը կարդանք ուսումնասէր եւ բանաստեղծ, իսկ Թ. Դարուն նշանաւոր մեկենաս եւ մշակոյթի նպաստ բերած կիներու մասին, ապա ան հաստատումներ կատարեց յաջորդ դարերու անուանի կիներու մասին» եւ հասնելով 19-րդ դար, ան յիշատակեց հայ երկնակամարի վրայ փայլուն գրագետուհիներ եւ վերջապէս՝ ազատագրական պայքարներու արիաբար մասնակցած հայրենասէր եւ ազգասէր կիներ: Ապա յիշեց 1915 ջարդի ընթացքին հայ կնոջ տառապանքը եւ անխախտելի կամքը յաջորդ սերունդը հայ պահելու աշխատանքին մէջ: «Պատմական Հայաստանի եւ Կիլիկիոյ շրջաններուն մէջ սկսած էին կոտորածներն ու կողոպուտները, երբ ծնունդ առաւ Հայ Օգնութեան Միութիւնը, որուն նպատակը եղաւ ձեռք երկարել կարիքաւոր հայրենակիցներուն:» ըսաւ ան, ապա աւելցուց «Հայ Օգնութեան Միութիւնը անցնող հարիւրամեայ ծառայութեան օրերուն միայն ճաշ տալու, բժշկական խնամք մատակարարելու միութիւն մը չեղաւ, այլ՝ իմացական եւ ազգային արհեստներուն, սրբութիւններուն եւ արժանապատուութեան տէրն ու պաշտպանը եղաւ:» եւ եզրափակեց «ՀՕՄ-ը պիտի շարունակէ իր երթը ամուր, դէպի նորանոր նուաճումներ կերտելու:»

Կրկին, Դալար Ներսէսեան նուազեց եւ երգեց «Արագ Գետին» եւ «Կռունկ» երգերը, որոնց յաջորդեց Կարօ Սարգիսեանի «Հայ Հինգին» նուիրուած բանաստեղծութիւնը իր կատարողութեամբ:

ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան ատենապետուհի՝ ընկհ. Աննա Պուլկարեան իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք՝ ՀՕՄ-ի անդամուհիներս ուխտեալներ ենք եւ ուխտած ենք ձեռք-ձեռքի տալով աշխատիլ եւ ծառայել այնքան ատեն, որ մեր ազգն ու հայրենիքը մեզի պէտք ունին, որպէսզի մեզի վստահուած այս

վեհ առաքելութիւնը կարենանք արդարացնել:» Ընկերուհին Շնորհակալութիւն յայտնեց Ուինձըրի ՀՕՄ-ի բոլոր ընկերուհիներուն իրենց ցուցաբերած ՀՕՄ-ավայել ընդունելութեան համար, ապա խօսքը ուղղելով Հայր Մեղրիկին ըսաւ.« Միրելի Հայր Սուրբ, առանց ձեզի այս ձեռնարկը կարելի պիտի չըլլար այսքան գեղեցիկ կերպով ներկայացնել: Ձեր վարձքը կատար:»

Հայր Մեղրիկ իր կարգին շնորհաւորեց ՀՕՄ-ի ընկերուհիները այս գեղեցիկ ձեռնարկին համար եւ ըսաւ.« Մի ըսէք, որ թիւով քիչ էք, թիւը երբեք կարելոր չէ, կարելորը որակն է: Շարունակեցէ՛ք պայքարիլ ձեր զաւակներուն համար եւ ձեր ունեցածը պահեցէ՛ք:» Ան նաեւ շնորհաւորեց Շրջանային վարչութեան անխոնջ աշխատանքը, փոքր մասնաճիւղերը աշխուժացնելու եւ կենսունակ պահելու առաջադրութեան համար:

Ուինձըրի ատենապետուհիին շնորհակալական խօսքերէն ետք, ձեռնարկը վերջ գտաւ Հայր Սուրբին Պահպանիչով:

Ձեռնարկի հասոյթէն 800 տոլար նուիրուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան Համահայկական Հիմնադրամին:



